

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՈՒՐՔԵՐԵՆԻ
ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ**

ՄԻՐԶՈՅԱՆ Ք. Պ.

Ժամանակակից թուրքերենում նախադասությունները, ըստ կազմության, լինում են պարզ և բարդ, որոնք ունեն ինչպես ընդհանրություններ, այնպես էլ տարբերություններ: Պարզ և բարդ նախադասությունները միմյանցից տարբերվում են ոչ թե իմաստային հատկանիշներով, այսինքն՝ մտքերի քանակով կամ մտքի բարդության աստիճանով, այլ կառուցվածքով, կառուցվածքային հատկանիշներով:

Թուրքերենում պարզ համառոտ նախադասության մեջ նախ դրվում է ենթական, լրացումը, ապա ստորոգյալը¹: Պարզ նախադասության մեջ բառերի շարահատությունը կարող է խախտվել, և ենթական կարող է դրվել ստորոգյալից առաջ, եթե իր վրա է կրում տրամաբանական շեշտը:

Ի տարբերություն պարզ նախադասության՝ բարդ նախադասության կազմում առկա են ստորոգումային երկու կամ ավելի կենտրոններ: Այլ կերպ ասած, պարզ նախադասությունը մենաստորոգումային է, բարդ նախադասությունը՝ բազմաստորոգումային:

Խոսքի մեջ կատարած տարբեր գործառույթների և կառուցվածքային առանձնահատկությունների հետ կապված՝ ժամանակակից թուրքերենում առանձնանում են նախադասությունների՝ իրար հակադրվող տարբեր խմբեր, որոնցից հիմնականները հետևյալներն են.

1. ըստ խոսքի նպատակադրման ու դրա հետ կապված հնչերանգների՝ տարբերվում են պատմողական, հարցական, հորդորական (հրամայական), բացականչական (զգացական) նախադասություններ.

2. ըստ արտահայտած մտքի և իրականության հարաբերության՝ տարբերակվում են դրական և ժխտական նախադասություններ.

3. ըստ ստորոգման արտահայտության շարահյուսական միջոցների՝ տարբերվում են դիմավոր, անդեմ և անվանողական նախադասություններ.

4. ըստ նախադասության մեջ միայն գլխավոր և նաև երկրորդական անդամների առկայության՝ տարբերակվում են պարզ համառոտ և պարզ ընդարձակ նախադասություններ.

5. ըստ նախադասության մեջ արտահայտված թվի՝ տարբերակվում են պարզ և բարդ նախադասություններ²:

Իրար հետ կապակցված խոսքերը միմյանց վերաբերմամբ ունեն երկու

¹ Սաֆարյան Ալ., Սողոմոնյան Ա., Լոբնազյոզյան Ս., *Թուրքերենի դասագիրք*, գ. Ա, Ե., 2007, էջ 28:

² Ասատրյան Մ. Ե., *Ժամանակակից հայոց լեզու*, Ե., 1989, էջ 126:

տեսակ հարաբերությունն՝ ստորադասական և համադասական³: Կապակցված խոսքերից մեկը, դառնալով մի ուրիշ խոսքի լրացում, իր կատարած պաշտոնով ստորադասվում է այն խոսքին, որի լրացումն է դառնում:

Կապակցված խոսքերը լինում են միմյանց համագոր և միմյանցից անկախ, այսինքն՝ մեկը մյուսի լրացում չեն դառնում, այնպես որ կապակցության վերանալով՝ դառնում են պարզ անկախ խոսքեր: Դրանք միմյանց վերաբերմամբ համադաս խոսքեր են և միասին կազմում են համադասությամբ բարդ խոսք կամ պարզապես համադասություն:

Ժամանակակից թուրքերենում ևս նախադասությունները դասակարգվում են՝ ա) ըստ հնչերանգի՝ դրական (հաստատական)-*olumlu*, ժխտական-*olumsuz*, հարցական-*soru*, բացականչական-*Şnlem*, բ) ըստ ստորոգյալի՝ անվանական-*ad tŞmcesli* և բայական-*eylem tŞmcesli*, գ) ըստ բնույթի՝ պարզ – *yalin* և բարդ – *birlesik* նախադասություն⁴:

Լեզվաբանները տվել են նաև թուրքերենի նախադասության կառուցվածքի հետևյալ բնութագրությունը. ըստ անդամների հաջորդականության՝ բառերի ճիշտ կարգով (հաջորդականությամբ) (*kurallı cümle*) և փոխակերպված (*devrik cümle*), ըստ ստորոգյալի՝ անվանական ու բայական, ըստ արտահայտման նպատակի՝ պատմողական (*haber cümleleri*) և հարկադրական (*gereklik cümleleri*), սահմանական (*haber*) և հարկադրական (*gereklik*), որոնք էլ իրենց հերթին բաժանվում են ըղձական (*dilek*), հարցական (*soru*), հրամայական (*emir*) և 3 տեսակի բացականչական՝ ցանկություն արտահայտող (*istek bildiren ünlem cümleleri*), հույս արտահայտող (*umma cümleleri*), վախ արտահայտող (*korku cümleleri*):

Ժամանակակից թուրքերենում ևս բարդ նախադասությունը բաղկացած է երկու (կամ ավելի) բաղադրամասերից, որոնցից յուրաքանչյուրն ունի ստորոգում: Մյուս կողմից, բարդ նախադասությունն ամբողջությամբ կառուցված է մի սխեմայով, որ հնարավորություն է տալիս գործածելու կապակցման այնպիսի միջոցներ, ինչպիսիք են շաղկապները, շաղկապական բառերը, հարաբերականները, տարբեր տիպի բառապաշարաբերականական հարաբերականներ (կոռելյաստներ), շաղկապական դադարներ և այլն, այսինքն՝ ունի կառուցվածքային ամբողջականություն: Բարդ ստորադասական նախադասության բաղադրամասերը նույնացված չեն ինքնուրույն, անկախ պարզ նախադասությունների հետ, բայց իրենց կառուցվածքով նույնպես նման են վերջիններին⁵:

Ըստ թյուրքագետ-լեզվաբան Ա. Կոնոնովի, նախադասության իմաստաբանական դասակարգումը հիմնվում է նախադասության բովանդակության վրա՝ պատմողական (դրական, ժխտական, կարելիության,

³ Աբեղյան Մ. Խ., *Աշխարհաբարի շարահյուսություն*, Վաղարշապատ, 1912, էջ 269:

⁴ Баскаков Н. А. *Предложение в современном турецком языке*, М., 1984, с. 5.

⁵ Соколов С. А. *Исследование по синтаксису сложного предложения в современном турецком литературном языке*, М., 1974, с. 4.

անկարելիության), հարցական (դրական), հարցա-բացականչական, բացականչական, հարցա-բացականչական (պատմողական, ըղձական, հարկադրական, պայմանական)⁶:

Թուրքերենում պատմողական նախադասությունները նախադասության մյուս տիպերից տարբերվում են իրենց քերականական և ինտոնացիոն միջոցներով: Դրանք կարող են լինել բայական և անվանական⁷:

Հարցական նախադասությունները խոսքի մեջ ներդնում են հատուկ գործառույթ՝ պարզաբանում⁸:

Հրամայական նախադասությունները արտահայտում են հրաման, պահանջ, խնդրանք, կոչ, խորհուրդ և այլն⁹:

Բացականչական նախադասությունները արտահայտում են տարբեր տիպի զգացմունքներ: Բացականչական նախադասությունը, որն ուղեկցվում է հեղինակի խոսքով, կարծես հուշում է ինտոնացիան և նշանակությունը¹⁰:

Նախադասությունը, որում առկա են բոլոր անհրաժեշտ անդամները, կոչվում է լիակատար: Իսկ եթե նախադասության մեջ բացակայում է անհրաժեշտ անդամներից մեկը կամ մի քանիսը, ապա դա կոչվում է ոչ լիակատար:

Ըստ ենթակայի և ստորոգյալի արտահայտման եղանակի՝ նախադասությունները լինում են միակազմ և երկկազմ: Երկկազմ նախադասության դեպքում ենթական և ստորոգյալն արտահայտված են նախադասության առանձին անդամով: Օրինակ՝

Ben yazıyorum. Ես գրում եմ:

Ben işçiyim. Ես բանվոր եմ:

Երկկազմ նախադասությունը, որի ենթական արտահայտված է անձնական դերանունով, գործածվում է նախադասության վրա ընկնող ուժեղ տրամաբանական շեշտի դեպքում: Օրինակ՝

Yedi yaşında olduğum halde onu ben idare etmeye başladım¹¹ - Չնայած յոթ տարեկան էի, ես սկսեցի կառավարել նրան:

Բարդ նախադասությունը միասնական կարծիքի արտահայտումն է, որը բաժանվում է երկու կամ ավելի նախադասությունների միջոցով: Նախադասությունների միավորումը մեկ ամբողջի մեջ տեղի է ունենում շաղկապների, շաղկապական բառերի, շաղկապական դադարների օգնությամբ: Բարդ նախադասությունն ունի իր հնչերանգն ու ռիթմը:

⁶ Кононов А. Н. Грамматика современного турецкого литературного языка, М., 1959, с. 494.

⁷ Нурмаханова А. Н. Типы простого предложения в тюркских языках, Ташкент, 1965, с. 14.

⁸ Նույն տեղում, էջ 48:

⁹ Նույն տեղում, էջ 84:

¹⁰ Նույն տեղում, էջ 99:

¹¹ Кононов А. Н., նշվ. աշխ., էջ 494:

Թուրքերենում բարդ նախադասությունները բաժանվում են բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասությունների¹²:

Ըստ Ա. Բասկակոյլի՝ ժամանակակից լեզվաբանության մեջ գոյություն ունի նախադասության տարբերակման երկու հատկանիշ: Դրանք են՝ ինտոնացիան և ստորոգելիությունը: Ըստ Վ. Վինոգրադովի՝ ինտոնացիան նախադասության կառուցման քերականական ձև չէ: Չնայած դրան՝ այն մեծ դեր ունի նախադասության ձևավորման մեջ¹³:

Նախադասության մեջ երկրորդ հիմնական հատկանիշը ստորոգելիությունն է, առանց որի նախադասությունը բաղկացած է մեկ գլխավոր և մեկ կամ մի քանի երկրորդական նախադասություններից: Բարդ նախադասության այդ բաղկացուցիչ մասերն ըստ ձևի համարվում են ավարտված պարզ նախադասություններ: Վինոգրադովը նշում է, որ բարդ նախադասության համար շինարարական նյութ է ծառայում ոչ թե բառը կամ բառակապակցությունը, այլ պարզ նախադասությունը: Ըստ նրա՝ բարդ են անվանվում այն նախադասությունները, որոնք ունեն նույն հնչերանգային և իմաստաբանական ամբողջություն:

Թուրքերենում գոյություն ունեն մի քանի ենթականերով, որոշիչներով, խնդիրներով, պարագաներով միավորյալ նախադասություններ. դրանք արտահայտվում են այնպես, որ միայն վերջին ստորոգյալն է դրվում բայի դիմավոր ձևով (*verbum finitum*), իսկ մյուսները փոխանցվում են մակբայական դերբայներով:

Օրինակ՝

Hepsine terciüme edip anlatmalıyım.

Բողորին թարգմանելով պետք է բացատրեմ:

Գրական լեզվում նախադասության ավելի տարածված տեսակը բարդ ստորադասականն է, բայց ավելի հաճախ հանդիպում են ածականական և մակբայական դերբայներով դարձվածները, կամ էլ *-dik/acak*-ով դերբայական դարձվածներ¹⁴: Թուրքերենում բարդ նախադասությունների դասակարգումը հիմնված է կառուցվածքային – իմաստաբանական չափանիշների վրա: Բարդ նախադասությունների բաղադրամասերի կառուցվածքը, դրանց հարաբերությունը, կապակցման ձևն ու եղանակը բարդ նախադասության կառուցվածքային որոշիչ բնութագրերն են¹⁵:

¹² Նույն տեղում, էջ 513:

¹³ Թ. Բանգուօղլուն նույնպես կարծում է, որ որոշակի կառուցվածքային սխեմայով կառուցված նախադասությունը կարող է ուղեկցվել տարբեր տիպի ինտոնացիաներով: Այդ պատճառով որոշ դեպքերում մինևույն շարահյուսական ձև և բառապաշարային լիցք ունեցող բարդ նախադասությունը խոսքային տարբեր պայմաններում կարող է ունենալ տարբեր ինտոնացիոն ձևակերպումներ: Տե՛ս **Banguoğlu T.** *Türkçe Grameri*, bölüm 1, Ankara, 1959, s. 240-242.

¹⁴ **Дмитриев Н. К.** *Турецкий язык*, М., 1960, с. 71.

¹⁵ **Соколов С. А.**, նշվ. աշխ., էջ 156:

Շարահյուսությամբ բարդ նախադասությունները դժվար է որոշել՝ բարդ ստորադասակա՞ն են, թե՞ բարդ համադասական¹⁶:

Թյուրքագիտության մեջ պարզ և բարդ նախադասությունների միջև սահման անցկացնելու խնդիրը մինչև այժմ համարվում է վիճելի ու չլուծված: Հիմնական վիճելի հարցերը վերաբերում են համադասության և ստորադասության էությանն ու դրանց հատկություններին: Երկրորդ հերթին դրանք վերաբերում են երկրորդական նախադասության սահմանմանը՝ բարդ ստորադասական կառույցներում և դրա հատկանիշներին, որոնք բնորոշ են քերականական տեսակետից երկու հոմանիշ կառույցներին՝ մի կողմից երկրորդական նախադասությանը, մյուս կողմից՝ ածականական և մակբայական դերբայական դարձվածներին:

Թյուրքագիտության մեջ նախադասության բոլոր բարդ կառույցների ծագման մասին հաստատվել է մի տեսակետ, ըստ որի՝ այն տեղի է ունենում երկու կամ մի քանի ստորոգելիական կառույցների միացությամբ կամ համադասության ճանապարհով, այսինքն՝ երբ ստորոգելիական կառույցներից մեկը համարվում է գերիշխող, գլխավոր, իսկ մյուսը՝ առաջինից կախյալ¹⁷:

Մի քանի ստորոգելիական կառույցների միացությունը համա-դասության միջոցով կարող է արտահայտվել կամ վերլուծական, այսինքն՝ բարդ նախադասության տեսքով՝ ինքնուրույն ենթակայով ու ստորոգյալներով, կամ շարահյուսորեն, այսինքն՝ պարզ նախադասության տեսքով: Հետևաբար բարդ նախադասություններին են վերաբերում անալիտիկ տիպի համադասական կառույցները, որոնք, անկախ կապակցման ձևից, ունեն երկու ենթախումբ.

1. Անշաղկապ բարդ համադասական նախադասություններ, որոնք իրենց հերթին բաժանվում են երկու հիմնական տիպի.

ա) անջատական-միացվածներ (*аморфно-сочлененных*), այսինքն՝ երկու կամ մի քանի պարզ նախադասությունների միացություն են, առանց որևէ քերականական ձևակերպման.

բ) մակբայական դերբայով շղթայական համադասական կառույցներ, այսինքն՝ երկու կամ մի քանի նախադասությունների միացություն, որոնցում միայն վերջին նախադասության ստորոգյալն է գործածվում բայի դիմավոր ձևերով, իսկ դրանից նախադաս ընկածների գործողության գաղափարը արտահայտվում է դերբայով:

2. Շաղկապական բարդ համադասական նախադասություններ, որոնք նույնպես, անկախ շաղկապների նշանակությունից և բնույթից, բաժանվում են՝.

ա) բաղիյուսական,

բ) ներհակական նախադասությունների:

Համադասական կառույցների սինթետիկ տիպին են վերաբերում պարզ նախադասությունները:

¹⁶ Նույն տեղում, էջ 157:

¹⁷ Баскаков Н. А. Историко-типологическая характеристика структуры тюркских языков, М., 1975, с. 236.

Երկրորդ խումբը ստորադասական այն նախադասություններն են, որոնք երկու կամ մի քանի ստորոգելիական կառույցների իմաստաբանական և քերականական միացություն են¹⁸: Կառույցների այսպիսի միացությունը ստորադասության ճանապարհով կարող է արտահայտված լինել կամ մի քանի պարզ նախադասություններից՝ ինքնուրույն ենթականերով և ստորոգյալներով, որոնցից մեկը համարվում է գլխավոր, իսկ մյուսը՝ երկրորդական՝ ծավալուն անդամներով: Հետևաբար, բարդ ստորադասական նախադասություններին են պատկանում միայն անալիտիկ տիպի ստորադասական կառույցները, որոնք, անկախ կապակցման ձևից, ունեն երկու հիմնական ենթախմբեր:

Ըստ Նուրեթին Քոչի սահմանման՝ թուրքերենում նախադասությունը կարելի է բաժանել երեք խմբի՝ ըստ տեսակների (*türlerine göre*), ըստ ստորոգյալների (*yüklemlerine göre*), ըստ ձևերի (*biçimlerine göre*)¹⁹: Բարդ է կոչվում այն նախադասությունը, որում կա մեկից ավելի դիմավոր բայ, հետևաբար այն ունի մեկից ավելի իմաստ: Բարդ նախադասությունում կա մի քանի երկրորդական նախադասություն²⁰:

Գլխավոր նախադասությունը (*temel tümce*) կազմվում է դիմավոր բայով և կրում է հիմնական իմաստը: Գլխավոր նախադասությունը ներառում է հիմնական տեղեկատվությունը և դրվում է բարդ նախադասության վերջում: Օրինակ՝ *Bir isim çikamzsa, ben de gelirim* – եթե գործ չծագի, ես էլ կգամ²¹:

Նախադասության ստորոգյալի քերականական արտահայտումը որոշակիացնում է նախադասության տիպը՝ անվանական և բայական²²:

Թուրքերենում ևս անվանական (*ad*) նախադասությունը օժանդակ բայից ու անունից բաղկացած կառույց է: Օժանդակ բայը ստորոգելիական մասն է, իսկ անվանական անդամը (անունը)՝ ստորոգյալի անվանական մասը: Ստորոգյալը կարող է կազմված լինել մեկ կամ մի քանի բառերից:

Հաղորդումն անվանական նախադասության հիմքն է, նրա գրլխավոր գործառնայթը: Օրինակ՝ *Hava güzeldir*. – Եղանակը լավն է: *Babam bugün çok yorgunmuş*. Հայրս այսօր շատ հոգնած է²³:

Այսպիսով, նախադասությունները, ըստ ստորոգյալների, բաժանվում են 2 խմբի՝ անվանական և բայական:

Բայական (*eylem*) է կոչվում այն նախադասությունը, որի ստորոգյալը դիմավոր բայն է: Բայական նախադասություններում ստորոգյալը դրվում է բայական բոլոր ժամանակաձևերով:

¹⁸ Նույն տեղում, էջ 237:

¹⁹ **Коç Н.** *Yeni dilbilgisi*, İstanbul, 1990, S. 418.

²⁰ Նույն տեղում, էջ 434:

²¹ Նույն տեղում, էջ 436:

²² *St u Серебряников Б. А., Гаджиева Н. З.* *Сравнительно- историческая грамматика тюркских языков*, М., 1986, с. 266.

²³ **Ergin M.** *Türk DilBilgisi*, İstanbul, 1985, s. 380-381.

Օրինակ՝ *Babam, ben yokken annemle her Şeyi görişmiş.* – Հայրս ամեն ինչ քննարկել էր մորս հետ, մինչ ես տանը չէի: *Salonda bütün konuklara büyük bir ziyafet verildi.* – Սրահում բոլոր հյուրերի համար մեծ ճաշկերույթ էին տվել: *Her gerçek, hayalile başlar.* – Ամեն իրականություն սկսվում է երևակայությամբ²⁴:

Ինչպես հայտնի է, այսպես կոչված կանոնակարգված (*kurallı*) նախադասություններում ընդհանրապես անդամների հետևյալ հերթականությունն է տիրում. ենթակա + բայական անդամի լրացում + ստորոգյալ: Մինչդեռ շրջուն նախադասություններում ստորոգյալը կարող է լինել նախադասության սկզբում կամ էլ միջնամասում: Նախադասության այլ անդամներն էլ շրջուն նախադասություններում կարող են իրենց տեղերը փոխել: Շրջուն նախադասությունները հիմնականում օգտագործվում են խոսակցական լեզվում, բանաստեղծություններում, պատմությանը ավելի աշխույժ ոճ հաղորդող գրերում, ասացվածքներում և դարձվածքներում:

Կանոնակարգված նախադասություն

Büyüklerin sözünü dinleyin.
Մեծերի խոսքը լսեք:

Ordumuz yaşasın.
Մեր բանակը կեցցե:

Inecek var mı?
Իջնող կա՞:

Շրջուն նախադասություն

Dinleyin büyüklerin sözünü.
Լսեք մեծերի խոսքը:

Yaşasın ordumuz.
Կեցցե մեր բանակը:

Var mı inecek?
Կա՞ իջնող²⁵:

Ամփոփելով նշենք, որ ժամանակակից թուրքերենում պարզ և բարդ նախադասությունները միմյանցից տարբերվում են կառուցվածքային հատկանիշներով. ի տարբերություն պարզ նախադասության՝ բարդ նախադասության կազմում առկա են ստորոգումային երկու կամ ավելի կենտրոններ: Նախադասության ստորոգյալի քերականական արտահայտումը որոշակիացնում է նախադասության տիպը՝ անվանական և բայական:

ТИПЫ ПРЕДЛОЖЕНИЙ В СОВРЕМЕННОМ ТУРЕЦКОМ ЯЗЫКЕ

МИРЗОЯН К. П.

Резюме

В современном турецком языке простые и сложные предложения отличаются друг от друга по своим конструктивным особенностям: в отличие от простых предложений в составе сложных имеются две или

²⁴ Hengirmen M., *Türkçe Dilbilgisi*, Ankara, 1995, s. 297-298.

²⁵ Նույն տեղում, էջ 298-299:

более предикативные основы. В турецком языке типы предложений (номинативное либо глагольное) определяются грамматическим выражением синтаксического сказуемого.

TYPES OF SENTENCES IN MODERN TURKISH

K MIRZOYAN

Abstract

In Modern Turkish, simple and complex sentences differ from each other in their structure. Thus, unlike simple sentences, complex sentences have two predicate bases. In Turkish, types of sentences, nominal or verbal, are determined by the grammatical expression of the predicate.